ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան 22» 02 2017թ. № 148-Ն

«ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ԶԱԿ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ» 2017 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 1313-Ն որոշման 13-րդ կետի 1-ին ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

Հաստատել.

1) «Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2017 թվականի ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) «Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2017 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի.

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի
2017 թվականի փետրվարի 22-ի N 148-Ա
հրամանի

2 0 1 7 Թ Վ Ա Կ Ա Ն Ի Ծ Ր Ա Գ Ի Ր
«ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ԶԱԿ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ»

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԲԱՆ

1. Հայաստանի Հանրապետությունում կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) զարգացումն է կոչված ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը՝ տնտեսությանը հաղորդելով նորարարական ուղղվածություն և ճկունություն:

2. ՓՄՁ-ի սուբյեկտներին ուղղված աջակցության ծրագրերը հիմնված են Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած տնտեսական քաղաքականության հիմնարար սկզբունքների վրա և նպաստում են երկրի, հատկապես նրա հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը, ինչը ներկայումս Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական քաղաքականության ռազմավարական ու գերակա ուղղություններից մեկն է: Այս առումով ՓՄՁ-ն իր առանձնահատկություններով ու զարգացմամբ ընձեռած հնարավորություններով այն անկյունաքարն է, որը նշանակալի ազդեցություն ունի երկրի տնտեսական զարգացման վրա՝ ապահովելով զգալի սոցիալ-տնտեսական արդյունք և տարածքային համաչափ զարգացում:

3. Կարևորելով ՓՄՁ-ի դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման և դրանով իսկ աղքատության հաղթահարման, ինչպես նաև երկրում սոցիալական համերաշխության ու քաղաքական կայունության

ապահովման գործում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում՝ ուղղված ՓՄՁ-ին պետական աջակցության և դրա զարգացման ուղղությամբ համապատասխան ծրագրերի (միջոցառումների) իրականացմանը, ինչպես նաև ՓՄՁ-ի զարգացման խոչընդոտների բացահայտմանն ու վերացմանը՝ շարունակաբար ներդնելով ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության առավել արդյունավետ մեխանիզմներ (գործիքներ):

4. Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2016 թվականին հետևողական աշխատանք է իրականացվել Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ-ի զարգացման քաղաքականության ու ռազմավարության, ՓՄՁ-ի զարգացման ծրագրերի մշակման, ինչպես նաև ՓՄՁ-ին պետական աջակցությամբ համապատասխան ծրագրերի (միջոցառումների) իրականացման ուղղությամբ:

5. Այսպիսով, «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2016 թվականի ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից ֆինանսական և տեխնիկական աջակցության ուղղություններով ***2016 թվականի ընթացքում*** աջակցություն է ցուցաբերվել շուրջ 4342 գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտի՝ ապահովելով 8959 աջակցության թվաքանակ, մասնավորապես՝

1) գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցության շրջանակներում. փաստացի՝ ցուցաբերվել է 8695 անգամ աջակցություն.

2) ֆինանսական և ներդրումային աջակցության շրջանակներում. փաստացի՝ աջակցություն է ցուցաբերվել 60 (այդ թվում՝ 42-ը տրամադրվել է «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից) գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտի.

3) այլ աջակցության շրջանակներում. փաստացի՝ ցուցաբերվել է 204 անգամ աջակցություն:

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2016 թվականի ծրագրի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից ուղղվել է 143 062 500 ՀՀ դրամ:

6. Ընդ որում՝ աջակցություն ստացած ՓՄՁ-ի սուբյեկտների 4%-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 96%-ը՝ Հայաստանի Հանրապետության մարզերում, առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում:

7. Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին տրամադրված աջակցության քանակը՝ ըստ մարզային բաշխվածքի հետևյալն է. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում՝ 780, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում՝ 1215, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում՝ 404, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում՝ 694, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում՝ 1572, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում՝ 1520, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում՝ 791, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում՝ 409, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում՝ 675, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում՝ 500, Երևան քաղաքում՝ 357:

8. Հարկ է նշել, որ 2016 թվականի ընթացքում «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2016 թվականի ծրագրի շրջանակներում բոլոր աշխատանքները (ծրագրային միջոցառումները/ուղղությունները) Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվել են առանց Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեից համապատասխան ֆինանսական միջոցների հատկացման.

1) սույն ծրագրով նախատեսված տեխնիկական բնույթի միջոցառումներն (ուղղություններն) իրականացվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի եկամուտների, ինչպես նաև միջազգային ու օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցների (այդ թվում՝ համաֆինանսավորման տարբերակով) հաշվին.

2) նշված ծրագրով նախատեսված ֆինանսական բնույթի միջոցառումները (ուղղությունները) վարկային երաշխավորությունների տրամադրման մասով իրականացվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միավորված դրամագլխի միջոցների հաշվին, իսկ ուղղակի վարկավորումը՝ «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի միջոցով:

ԳԼՈՒԽ 2. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

9. «Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2017 թվականի ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) մշակման և իրականացնելու հիմքն են «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման

2016-2018 թվականների ռազմավարությունը» և «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն է (4-րդ հոդվածի պահանջ):

10. Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել նաև՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը.
2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի N 131-Ն որոշումը (N 1 հավելվածի 22-րդ կետ).
3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի ապրիլի 21-ի N 403-Ն որոշմամբ հաստատված «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2016 թվականի ծրագրով նախատեսված ծրագրային ցուցանիշների ուսումնասիրության և վերլուծության արդյունքները:

ԳԼՈՒԽ 3. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

11. Ծրագրի նպատակներն են՝

1) պետական ուղղակի աջակցության մեխանիզմների (գործիքների) միջոցով երկրում ՓՄՁ-ի զարգացման խթանումը.
2) ՓՄՁ-ի զարգացման միջոցով երկրի, հատկապես նրա հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը նպաստելը.
3) ՓՄՁ-ի զարգացման միջոցով երկրի տնտեսության բազմազանեցմանը նպաստելը և զբաղվածության ու ինքնազբաղվածության մակարդակի բարձրացման ապահովումը.
4) ՓՄՁ-ի սուբյեկտներին պետական աջակցությանը նպատակաուղղված շրջանակների բազմազանեցումը, ինչպես նաև ՓՄՁ-ի սուբյեկտներին ցուցաբերվելիք պետական աջակցության նպատակայնության ու հասցեականության ապահովումը:

12. Ծրագրի նպատակների իրագործման ապահովման համար նախատեսվում են՝

1) գործարար միջավայրի բարելավմանը զուգընթաց գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտների ձեռներեցությամբ զբաղվելու, ինչպես նաև նրանց ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնում՝ նախապատվությունը տալով Հայաստանի Հանրապետության մարզերին՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման առանձնահատկությունները.
2) ՓՄՁ-ի սուբյեկտներին պետական աջակցության առկա մեխանիզմների/գործիքների (ֆինանսական, տեղեկատվական, խորհրդատվական, ուսուցողական և այլն) կիրառման շարունակականության և արդիականացման ապահովում.
3) ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության միջազգայնացում, մասնավորապես, հեռանկարային և արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտներին աջակցություն՝ գործող միջազգային կառույցներին և ցանցերին ինտեգրում.
4) ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից ռեսուրսախնայողական և մաքուր արտադրության սկզբունքների կիրառման խրախուսում.
5) ծրագրի իրականացման շրջանակներում ավելի շատ ՓՄՁ-ի սուբյեկտների ներգրավում և նրանց ցուցաբերվող պետական աջակցության շրջանակների ընդլայնում.
6) ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցող ենթակառուցվածքների հզորացման միջոցառումների իրականացում:

ԳԼՈՒԽ 4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

13. Ծրագրի իրականացման սկզբունքներն են՝

1) ծրագիրն իրականացվում է ծրագրով նախատեսված ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցող կառույցների միջոցով.
2) ծրագրի իրականացման շրջանակներում նախապատվությունը տրվում է արտադրության և ծառայությունների ոլորտում գործող, նորարարություններ ներդնող, ժամանակակից ու մաքուր տեխնոլոգիաներ կիրառող, հեռանկարային և

արտահանման ներուժ ունեցող՝ գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցությանը.

3) ծրագրի իրականացման նշանակալի մասն ուղղվում է Երևան քաղաքից դուրս՝ Հայաստանի Հանրապետության մարզերում, հատկապես հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերում գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ցուցաբերմանը.
4) միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ փոխհամաձայնությունների շրջանակներում մշակվում և իրականացվում են ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրեր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 5. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ (ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

14. Ծրագրով նախատեսված ծրագրային միջոցառումներն (ուղղություններն) են՝

1. **ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում**

15. Սույն ծրագրային միջոցառման (ուղղության) շրջանակներում կիրականացվեն աշխատանքներ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի աշխատողների մասնագիտական հմտությունների զարգացման և որակավորման բարձրացման, ինչպես նաև աջակցության ծրագրերում գործընկեր կազմակերպությունների ներգրավման ուղղությամբ:

16. Միաժամանակ, աջակցություն կցուցաբերվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի, մարզային մասնաճյուղերի պահպանմանը, ամրապնդմանը, դրանց նյութատեխնիկական ապահովվածության մակարդակի բարձրացմանը, դրանց գործունեության ընդլայնմանն ու կարողությունների հզորացմանը:

2. ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում)

17. ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցության շրջանակներում կիրականացվեն «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրեր, որոնք ընդգրկում են հետևյալ բաղադրիչները՝ մասնակիցների ուսուցում, վերապատրաստում, մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում, մանրակրկիտ ընտրության փուլ անցած գաղափարների կյանքի կոչման նպատակով գործարար ծրագրերի մշակում: Այդ ամենի արդյունքում սկսնակ գործարարները ձեռք կբերեն իրենց բիզնեսի, անձնակազմի և ֆինանսական միջոցների կառավարման, պլանավորման, շուկայավարման գիտելիքներ և համապատասխան գործարար հմտություններ:

18. 2017 թվականին նախատեսվում է իրականացնել «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրեր Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում և քաղաք Երևանում:

19. Բացի դրանից՝ ուսուցողական աջակցության շրջանակներում, ըստ կարիքի, կիրականացվեն նաև այլ գործարար ուսուցողական դասընթացներ՝ գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտների համար, որոնք կկազմակերպվեն միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ համագործակցության շրջանակներում: Դրա հետ մեկտեղ Հայաստանի Հանրապետության մարզերում կիրականացվեն նաև ոլորտային (տեխնոլոգիական) դասընթացներ, որոնց իրականացման վայրը և բնույթը նույնպես կորոշվեն կարիքների գնահատման հիման վրա՝ ըստ առկա պահանջարկի:

20. Ընդհանուր առմամբ, 2017 թվականին գործարար ուսուցողական աջակցության ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում գործարար ուսուցողական դասընթացներին կմասնակցեն առնվազն 350 սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտներ:

21. Սույն ծրագրային միջոցառման (ուղղության) իրականացման ժամանակ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը կհամագործակցի միջազգային, օտարերկրյա և տեղական կազմակերպությունների (ծրագրերի) հետ:

22. 2017 թվականին տվյալ ուղղության շրջանակներում նախատեսվում է իրականացնել «Սևան ստարտափ սամիթ 2017» խորագրով միջոցառումը: Միջոցառման նպատակն է նորարարական, առաջադեմ և հեռանկարային գործարար գաղափարներ ունեցող ստարտափների զարգացումը և դրանց ֆինանսավորման համար հնարավորությունների ստեղծումը: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է մի քանի տասնյակ ստարտափ թիմերի մասնակցություն, որոնք վրանային ճամբարի սկզբունքով շուրջ մեկ շաբաթ կանցկացնեն Սևանա լճի ափին: Ծրագրի ողջ ընթացքում կկազմակերպվեն սեմինարներ, ուսուցողական դասընթացներ, անհատական խորհրդատվություններ, մենթորային միջոցառումներ հայաստանյան և օտարերկրյա պետություններից ժամանած լավագույն մասնագետների մասնակցությամբ: Միջոցառման շրջանակներում պարբերաբար հանդիպումներ կկազմակերպվեն պոտենցիալ ներդրողների և մասնակից թիմերի միջև՝ առաջարկվող գաղափարների համար հնարավոր ներդրումներ ստեղծելու նպատակով, բացի այդ կկազմակերպվեն գործարար գաղափարների մրցումներ, որոնց հաղթողները կստանան ֆինանսական դրամաշնորհներ: Նշված միջոցառումն արդեն իրականացվել է 2016 թվականին և ապացուցել է իր արդյունավետությունը: 2017 թվականին նախատեսվում է ավելի ընդլայնել այն՝ ներգրավելով մասնակիցներ, ներդրողներ և մասնագետներ նաև օտարերկրյա պետություններից: Միջոցառման իրականացման համար Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը սերտ համագործակցություն կհաստատի տեղական, օտարերկյա և միջազգային մի շարք կազմակերպությունների հետ:

23. *Աջակցություն սիրիահայ գործարարներին.* Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի, Գերմանիայի միջազգային համագործակցության Ընկերության (GIZ), ինչպես նաև շահագրգիռ այլ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ կմշակի գործողությունների ծրագիր Սիրիայի պատերազմից հայրենիքում ապաստան գտած հայրենակիցներին՝ Հայաստանում սեփական բիզնես սկսելու և ընդլայնելու նպատակով նոր կազմակերպությունների հիմնադրման համար բազմատեսակ և բազմաոլորտ աջակցության տրամադրման ուղղությամբ:

3. ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

24. ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն կցուցաբերվի հետևյալ ուղղություններով՝

25. *ՓՄՁ-ի սուբյեկտների առավել լայն շրջանակների համար գործարար տեղեկատվության և խորհրդատվության հասանելիության և մատչելիության ապահովման նպատակով* Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում խմբային և անհատական հանդիպումներ կկազմակերպվեն ՓՄՁ-ի սուբյեկտների ներկայացուցիչների (գործարարների) հետ: Հանդիպումների ընթացքում գործարարներին կներկայացվեն Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտում տեղի ունեցած ու նախատեսվող փոփոխությունները և կտրվեն պարզաբանումներ: Մասնագետները կպատասխանեն նաև մասնակիցների կողմից տրվող հարցերին: Ըստ անհրաժեշտության, հանդիպումներին մասնակից կդառնան նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ: Որոշակի հարցերի քննարկման նպատակով հանդիպումներ կկազմակերպվեն նաև հատուկ թիրախավորված խմբերի հետ: 2017 թվականին շեշտը հատկապես կդրվի ՀՀ հարկային օրենսգրքի վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտներին իրազեկման աշխատանքների վրա: Դրա հետ մեկտեղ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից պարբերաբար կմշակվեն ու գործարարներին կտրամադրվեն տեղեկատվական նյութեր, կիրատարակվի մասնագիտական գրականություն, ինչպես նաև կօգտագործվեն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ինտերնետային կայքի հնարավորությունները:

26. Տվյալ բաղադրիչի շրջանակներում սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին կտրամադրվեն նաև անհատական խորհրդատվություններ ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող օրենսդրական բոլոր ուղղություններով, այդ թվում՝ հարկային, մաքսային, սննդի անվտանգության, տեխնիկական կանոնակարգման, հավաստագրման և սերտիֆիկացման, մտավոր սեփականության պաշտպանության, տեսչական բարեփոխումների և հսկողության, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության, Եվրոպական միության իրավական կարգավորումների վերաբերյալ և այլն:

27. Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական և մարզային գրասենյակները կշարունակեն ծառայել ՓՄՁ սուբյեկտների համար որպես *Աջակցության Կենտրոններ,* որոնց միջոցով ՓՄՁ-ի սուբյեկտները հնարավորություն կունենան Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մասնագետների օգնությամբ պատրաստել և ՀՀ հարկային մարմիններ ներկայացնել իրենց էլեկտրոնային հաշվետվությունները, հաշվարկները և այլ հաշվարկային փաստաթղթերը:

28. *Պետություն-մասնավոր հատված երկխոսության ամրապնդման շրջանակներում* Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը կհամագործակցի ՓՄՁ-ի սուբյեկտների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների և առանձին գործարար խմբերի հետ: Համագործակցության շրջանակներում կքննարկվեն առանձին ոլորտներում առկա խնդիրները, ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորող օրենսդրության և վարչարարության բնագավառներում գոյություն ունեցող հիմնահարցերը, կձևավորվեն խնդիրների լուծման և պետական աջակցության նոր գործիքների վերաբերյալ առաջարկություններ: Քննարկումների արդյունքները կտրամադրվեն Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը և շահագրգիռ այլ նախարարություններին:

29. 2017 թվականի ընթացքում, ֆինանսական միջոցների առկայության դեպքում, աշխատանքներ կիրականացվեն նաև ՓՄՁ-ի սուբյեկտների համար գործարար խորհրդատվական ծառայությունների մատուցման մատչելիության ապահովման ուղղությամբ: Այդ նպատակով կշարունակվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից համաֆինանսավորման սկզբունքով աջակցություն տրամադրվել ՓՄՁ-ի սուբյեկտներին՝ մրցութային կարգով ընտրված գործարար ծառայություններ մատուցող (ԳԾՄ) կառույցների միջոցով ներդրումային և զարգացման ծրագրերի մշակման և այլ ուղղություններով:

30. 2017 թվականին կիրականացվեն ՓՄՁ-ի ոլորտում պետական քաղաքականության, պետական աջակցությանն և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործունեության վերաբերյալ հանրության իրազեկվածությանն ուղղված միջոցառումներ: 2017 թվականին կշարունակի գործել և կընդլայնվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ինտերնետային էջը, որը պարբերաբար կհամալրվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործունեության մասին և գործարարների համար օգտակար տեղեկատվությամբ: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից մշակված տեղեկատվական ու վերլուծական նյութերը (մասնագիտական և տեղեկատվական բնույթի գործարար ուղեցույցներ, բրոշյուրներ, տեղեկագրեր) ևս կտեղադրվեն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ինտերնետային էջում, որոնք հասանելի կլինեն ՓՄՁ-ի սուբյեկտներին և գործարարությանն աջակցող կազմակերպություններին: Դրա հետ մեկտեղ զանգվածային լրատվության միջոցներով (ԶԼՄ-ներ), այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության մարզերում գործող ԶԼՄ-ներով, գործարար համայնքին կներկայացվի համապատասխան տեղեկատվություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրվող աջակցության

ուղղությունների (ծրագրերի) մասին, ինչպես նաև կներկայացվի առանձին ՓՄՁ-ի սուբյեկտների հաջողված փորձը: Միաժամանակ կհեռարձակվի «ՓՄՁ լրատու» հեռուստահաղորդաշարը: ՓՄՁ ԶԱԿ-ի կայքից բացի, կենտրոնի գործունեության մասին պատմող հաղորդագրությունները ԶԼՄ-ներին կտարածվեն ՓՄՁ ԶԱԿ-ի հանրային կապերի բաժնի կողմից՝ էլեկտրոնային փոստի միջոցով: Կայքին զուգահեռ կշարունակեն գործել ՓՄՁ ԶԱԿ-ի սոցիալական ցանցային էջերը՝ Ֆեյսբուք, Թվիթեր, Յութուբ և ԼինկդԻն սոցցանցերում:

31. 2017 թվականին անհրաժեշտ միջոցներ կձեռնարկվեն նաև Հաշվապահական կենտրոնի գործունեության կազմակերպման համար, ինչը ՓՄՁ-ի սուբյեկտներին հնարավորություն կտա օգտվելու հաշվապահական հաշվառման վարման և հարկային հաշվետվությունների պատրաստման մատչելի ծառայություններից: Հաշվապահական կենտրոնում գործող կազմակերպությունների մասնագետների կողմից ՓՄՁ սուբյեկտներին կտրամադրվի անվճար խորհրդատվություն: Դրա հետ մեկտեղ, ըստ անհրաժեշտության, Հաշվապահական կենտրոնի մասնագետները կներգրավվեն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից ՓՄՁ-ի սուբյեկտների համար կազմակերպված իրազեկման աշխատանքներում:

32. Ընդհանուր առմամբ, 2017 թվականին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության շրջանակներում աջակցություն կցուցաբերվի 3500-4000 ՓՄՁ-ի սուբյեկտի՝ ապահովելով առնվազն 8000 անգամ աջակցություն:

4. ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն

33. ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության զարգացման համար կարևոր խնդիր է ֆինանսական (վարկային) ռեսուրսների հասանելիությունը: Այդ նպատակով ծրագրի շրջանակներում 2017 թվականին կշարունակվեն ֆինանսական և ներդրումային աջակցության մեխանիզմների (գործիքների) կիրառումը:

34. Ֆինանսական (վարկային) ռեսուրսների հասանելիության մակարդակի բարձրացման նպատակով կհաստատվի համագործակցություն նոր ֆինանսական կազմակերպությունների հետ:

35. Ծրագրային այս միջոցառումը (ուղղությունը) ներառում է հետևյալ ֆինանսական մեխանիզմները (գործիքները)՝

1) Վարկերի դիմաց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից երաշխավորությունների տրամադրում.
2) Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորությունների տրամադրում).
3) Գործարար նախաձեռնություններին աջակցություն.
4) ՓՄՁ-ի սուբյեկտների ուղղակի վարկավորում:

36. ***<u>Վարկերի դիմաց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից երաշխավորությունների տրամադրում</u>***՝ ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսավորման (վարկավորման) հետ կապված հիմնախնդիրների հաղթահարման և այդ ուղղությամբ նրանց համար ֆինանսական (վարկային) ռեսուրսների մատչելիության ապահովման նպատակով ծրագրի շրջանակներում, որպես ֆինանսական աջակցության գործիք, 2017 թվականին կշարունակվի ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրումը, որը կիրականացվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից: Այն նպատակաուղղված է ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման միջոցով գրավադրման խնդրի հաղթահարմանը, Հայաստանի Հանրապետության մարզերում, հատկապես սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում ՓՄՁ-ի սուբյեկտների վարկավորման հնարավորությունների ընդլայնմանը:

37. Այստեղ նախապատվությունը տրվում է գրավի անբավարարության կամ ցածր իրացվելիության պատճառով չվարկավորված արտադրության կամ ծառայությունների ոլորտում գործող, ինչպես նաև տնտեսական ցածր ակտիվությամբ առանձնացող բնակավայրերում և շրջաններում առևտրի ոլորտում գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին կամ ներմուծումը փոխարինող, արտահանող, արտահանման ներուժ ունեցող, նորարարություններ ներդնող, ժամանակակից ու մաքուր տեխնոլոգիաներ կիրառող ՓՄՁ-ի սուբյեկտներին:

38. ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման առավելագույն ժամկետը 5 տարի է: ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին տրամադրվող վարկային երաշխավորության գումարը չի կարող գերազանցել վարկի գումարի 70 տոկոսը և 15,000.0 հազ ՀՀ դրամը: Սույն ծրագրի շրջանակներում վարկային երաշխավորությունները տրամադրվում են Հայաստանի ՓՄՁ

ԶԱԿ-ի գործընկեր ֆինանսական կառույցների միջոցով: Առանձին դեպքերում ՓՄՁ-ի սուբյեկտներին կարող են տրամադրվել 15,000.0 հազ ՀՀ դրամը գերազանցող վարկային երաշխավորություններ՝ առավելագույնը 5 տարի ժամկետով, որոնցից յուրաքանչյուրի տրամադրումը կսահմանվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

39. ***Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցության (վարկային երաշխավորությունների տրամադրման)*** շրջանակներում կցուցաբերվի աջակցություն՝ սկսնակ գործարարների ֆինանսավորման (վարկավորման) հնարավորություններն ընդլայնելու և ֆինանսավորման (վարկավորման) պայմանները բարելավելու համար: Ֆինանսական աջակցություն (վարկավորում) կցուցաբերվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվող՝ «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում իրականացված ուսուցման դասընթացների արդյունքում (բացառությամբ սիրիահայ գործարարների, ովքեր գործարար ծրագրերը կարող են ներկայացնել «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրից դուրս) այն սկսնակ գործարարներին, որոնց կողմից ներկայացրած գործարար ծրագրերը բավարարում են «Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն» ծրագրի Կանոնակարգով սահմանված պահանջներին:

40. Սկսնակ գործարարներին տրամադրվող ֆինանսական աջակցության (վարկավորման) առավելագույն գումարը կկազմի 5.000 հազ ՀՀ դրամ, տարեկան 10 տոկոս (սիրիահայ գործարարների դեպքում 4 տոկոս) տոկոսադրույքով, մինչև 5 տարի մարման ժամկետով: Կախված իրականացվող ծրագրերի բնույթից՝ ֆինանսավորումը (վարկավորումը) կարող է իրականացվել փուլային սկզբունքով՝ ապահովելով իրականացվող ծրագրերի շարունակականությունը և վերահսկելիության արդյունավետության բարձրացումը: Ընդ որում, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից վարկային երաշխավորությունները շահառուներին (սկսնակ գործարարներին) կտրամադրվեն վարկային պարտավորության 100 տոկոսի չափով:

41. ***Գործարար նախաձեռնություններին աջակցություն՝*** 2017 թվականին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից կշարունակվի իրականացվել «Գործարար նախաձեռնությունների աջակցություն» ծրագիրը: Այս ծրագրի նպատակներն են նոր ՓՄՁ-ի սուբյեկտների և դրանց հաշվին նոր աշխատատեղերի ստեղծումը, ներքին և արտաքին

ներդրումների խթանումը, Հայաստանի տնտեսական զարգացման նպատակով սփյուռքի ներուժի ներգրավումը, Հայաստանում նորարարական գործարար գաղափարների ներդրումը և արտահանման ներուժ ունեցող, ներմուծմանը փոխարինող ՓՄՁ-ի սուբյեկտների ստեղծումն ու զարգացումը և ներգաղթի համար բարենպաստ պայմանների ստեղծումը: Ծրագրի նպատակային խմբերն են Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրության և ծառայությունների ոլորտներում գործող ՓՄՁ-ի սուբյեկտները, օտարերկրյա պետություններում բնակվող հայազգի ներկայացուցիչները, ովքեր ցանկանում են գործարարությամբ զբաղվել Հայաստանում:

42. Սույն ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից շահառուներին կտրամադրվեն վարկային երաշխավորություններ՝ վարկային պարտավորության մինչև 100 տոկոսի չափով, սակայն շահառուից նախապես կպահանջվի իրականացնել դրամական ներդրումներ:

43. «Գործարար նախաձեռնությունների աջակցություն» ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող գործարար ծրագրերի իրականացման արդյունավետությունը բարձրացնելու և ձախողման ռիսկերը նվազեցնելու նպատակով Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից շահառուներին համալիր կիրառական աջակցություն կցուցաբերվի ամբողջ գործիքակազմի միջոցով:

44. Ընդհանուր առմամբ՝ 2017 թվականին աջակցություն կցուցաբերվի 15-20 գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտի:

45. ***<u>ՓՄՁ-ի սուբյեկտների ուղղակի վարկավորում և ֆինանսական այլ գործիքների կիրառում</u>*** 2017 թվականին տնտեսվարող սուբյեկտների ուղղակի վարկավորման ծրագրեր կիրականացվեն «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերության կողմից:

46. «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն նախատեսում է 2017 թվականին ակտիվ շարունակել տնտեսվարող սուբյեկտների ուղղակի վարկավորման գործընթացը: 2017 թվականին կշարունակվեն նաև արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերության ոլորտի կազմակերպություններին «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորումը Հայաստանի զարգացման հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում

(մշակող արդյունաբերության ոլորտի և/կամ ճարտարագիտական ծառայություններ մատուցող կազմակերպություններին տրամադրվող վարկերի առաջին երկու տարվա ընթացքում վճարման ենթակա տոկոսագումարները սուբսիդավորվում են 3 տոկոսային կետին համարժեք գումարի չափով, իսկ սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող կազմակերպություններին տրամադրվող վարկերի տոկոսագումարները՝ 7 տոկոսային կետին համարժեք գումարի չափով):

47. Միաժամանակ, 2017 թվականին «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն կշարունակի տնտեսվարողներին առաջարկել երաշխիքներ, մասնավորապես՝ կտրամադրվեն մրցույթների մասնակցության, կանխավճարների ապահովման, պայմանագրերի կատարման, հետավարտման (որակի) և արտահանման երաշխիքներ, որոնք կնպաստեն ինչպես տեղական շուկայում գործունեություն իրականացնող, այնպես էլ արտահանման ներուժ ունեցող կազմակերպությունների գործունեության զարգացմանը:

48. Վարկային կազմակերպությունը կշարունակի նաև գյուղացիական համայնքներին և գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններին ֆինանսական վարձակալության (լիզինգի) տեսքով ցուցաբերել ֆինանսական աջակցություն: ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի պարկը նոր տեխնիկաներով համալրելու նպատակով՝ նախատեսվում է համագործակցել Հայաստանում գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման և տեխնիկական սպասարկման գործում մասնագիտացված կազմակերպությունների հետ, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ կազմակերպել գյուղտեխնիկայի որոշակի խմբաքանակների ներկրում և ֆինանսական վարձակալությամբ տրամադրում:

49. Նպատակ ունենալով ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության իրագործման ծրագրի շրջանակներում զարգացնել ՀՀ արտահանման խթանմանն ուղղված միջոցառումների համալիր գործընթացը՝ վարկային կազմակերպությունը 2017 թվականին «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի հետ համագործակցության շրջանակներում շարունակելու է իրականացնել նախարտահանման ֆինանսավորում: Համագործակցության արդյունքում արտահանման ուղղվածություն ունեցող տնտեսվարող սուբյեկտներին կառաջարկվեն առևտրային վարկեր (մինչև 18 ամիս մարման ժամկետով), որոնք ապահովագրված կլինեն վերոնշյալ գործակալության կողմից և կպաշտպանեն արտահանողներին օտարերկրյա գնորդների չվճարման ռիսկերից:

50. Հաշվի առնելով հաճախորդների կողմից վարկի ստացման համար առաջարկվող գրավի անբավարարության խնդիրը՝ «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն 2017 թվականին կշարունակի տրամադրել վարկեր, որոնց ապահովման միջոց կհանդիսանան հաճախորդի կողմից առաջարկվող գրավը, իսկ չբավարարող մասով Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից տրված երաշխավորությունը, որն ապահովված կլինի առևտրային բանկում դեպոնացված դրամական միջոցներով, ընդ որում հիմնադրամի կողմից գրավադրված գումարի չափը չի կարող գերազանցել վարկի մայր գումարի 70%-ը և 15,000 հազ ՀՀ դրամը, իսկ նորարարական գործարար գաղափարներ ներդնող, նոր տեխնոլոգիաներ կիրառող, արտահանման ներուժ ունեցող տնտեսվարողներին հիմնադրամի կողմից որպես վարկի ապահովման միջոց ամբողջությամբ դրամական միջոցներ գրավադրելու դեպքում «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից կտրամադրվեն մինչև 50,000 հազ ՀՀ դրամ վարկեր:

51. Ընդլայնելով առաջարկվող գործիքակազմը՝ նախատեսվում է նաև զարգացնել ֆակտորինգային գործառնություններ՝ որպես կարճաժամկետ ֆինանսավորման արդյունավետ գործիք, ինչը հնարավություն կտա տնտեսվարողներին ավելացնել արտադրության և վաճառքի ծավալները՝ գնորդներին առավել շահավետ պայմաններ առաջարկելով, այդ թվում՝ վճարման հետաձգում:

5. Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային աջակցություն

52. «Տեղական տնտեսական զարգացում» ծրագրային միջոցառման (ուղղության) նպատակն է Հայաստանի Հանրապետության համայնքների համաչափ զարգացման խնդիրների լուծման նպատակով մասնակցային պլանավորման և արդյունքների մասնակցային գնահատման մեթոդների վրա հիմնված տարածաշրջանային և համայնքային տնտեսական զարգացման ծրագրերի իրականացումը, ինչպես նաև տեղական հումքի, աշխատուժի, ավանդույթների և գիտելիքի վրա հիմնված մրցունակ արտադրության խթանումը, տեղական ապրանքանիշերի ձևավորումը և հետագա առաջմղումը՝ նորարարական մոտեցումների կիրառմամբ: Միաժամանակ, տեղական տնտեսական զարգացումը միտված է բացահայտելու Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական ներուժը և դրա հիման վրա ձեռնարկելու Հայաստանի

Հանրապետության տնտեսության զարգացման նախաձեռնություններ, որոնք կբարձրացնեն Հայաստանի Հանրապետության համայնքների մրցունակությունը և Հայաստանի Հանրապետության տնտեսության ճյուղերի արդյունավետությունը: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամն իր գործունեությունը իրականացնելիս ըստ հնարավորության հաշվի կառնի ՀՀ տարածքային զարգացման 2016-2025 թվականների ռազմավարությամբ նախատեսված ընդհանուր գործառնական ծրագրերի առաջնահերթությունները և նախատեսված միջոցառումները, ինչպես նաև յուրաքանչյուր մարզի համար մշակված 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունները:

53. Տեղական արտադրանքի խթանում և տեղական ապրանքանիշերի առաջմղում՝ աջակցություն կցուցաբերվի տեղական ռեսուրսների վրա հիմնված ապրանքների և ծառայությունների զարգացմանը: Այս համատեքստում լայնորեն կկիրառվի «Մեկ գյուղ, մեկ արտադրանք» - ՕՎիՕՓի («One Village One Product» - OVOP) ճապոնական հայեցակարգը, որի Հայաստանում տեղայնացումը կատարվել է սկսած 2012 թվականից և ունի ընդլայնման և տարածման միտում: Հայկական «Մեկ գյուղ, մեկ արտադրանք» հայեցակարգը բնորոշվում է որպես տեղական ինքնության հետ համահունչ տեղական տնտեսություն, տեղական ձեռնարկությունների և ապրանքների առաջմղման համաժամանակյա գործողություններ: Հայեցակարգի հիմնարար մեթոդներն են՝ անհատական և խմբային շուկայավարումը, տարածքային և անհատական ապրանքանշումը, բիզնեսի կառավարման և որակի շարունակական բարելավումը:

54.Կշարունակվի 2013 թվականին մեկնարկած ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման - ՓԻԱՌՓԻ (PRP)» ծրագիրը, որի շրջանակում Հայաստանի շուրջ 100 համայնքներում կիրականացվեն տեղական տնտեսական զարգացման նախաձեռնություններ, այդ թվում՝ համայնքների տնտեսական ախտորոշում՝ մասնակցային գնահատման մեթոդով, ենթակառուցվածքային ծրագրերի իրականացում, փոքր դրամաշնորհների տրամադրում, տեխնոլոգիական մոդելների մշակում և այլն:

55. Ոլորտային բիզնեսներին աջակցության նպատակն է տեղական հումքի, աշխատուժի, ավանդույթների և գիտելիքի վրա հիմնված տնտեսության՝ հատկապես արտահանման ներուժ ունեցող մրցունակ ոլորտների զարգացումը և ներմուծմանը փոխարինող տեղական արտադրությունների ձևավորման խթանումը՝ օրինակելի

գործարար մոդելների ներդրման միջոցով: Ոլորտային բիզնեսներին աջակցության շրջանակներում կիրականացվեն օրինակելի գործարար մոդելների ստեղծում և ներդրում, տեխնոլոգիական ձեռնարկ-ուղեցույցի հրատարակում, տեխնոլոգիական դրամաշնորհի տրամադրում, ուղեկցում, մոնիթորինգ և գնահատում: Մասնավորապես, կշարունակվի աջակցություն ցուցաբերվել ջերմոցային և սառնարանային տնտեսություններին, չրագործությամբ, հյուրատնային գործունեությամբ, պանրի, պահածոների և մսամթերքի արտադրությամբ զբաղվող բիզնեսներին, ինչպես նաև կմեկնարկեն այլ մրցունակ ենթաճյուղերի աջակցության աշխատանքները:

56. Ընդհանուր առմամբ՝ 2017 թվականին, 2013-2016թթ. ընթացքում կատարած մրցակցային առավելությունների մասնակցային գնահատման - ՊԱԿԱ (PACA) արդյունքում բացահայտված տնտեսական նախաձեռնություններից կիրականացվեն՝

1) 10-15 ենթակառուցվածքային ծրագրեր (օրինակ՝ ոռոգման համակարգերի վերանորոգում/վերակառուցում, գյուղմթերքի մթերման կայանների հիմնում, հացահատիկի զտման կայանի հիմնում և այլն).

2) Կմշակվի – 1 օրինակելի գործարար մոդել և 1 գործարար ուղեցույց.

3) Գերակա ոլորտներում գործող 10-15 սկսնակ գործարարների կտրամադրվեն դրամաշնորհներ.

4) Տեխնոլոգիական դասընթացներ/խորհրդատվություն կկազմակերպվի շուրջ 40 սկսնակ գործարարների համար (ներառված է ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն բաժնի ցուցանիշների մեջ).

5) Կթարմացվի տնտեսական քարտեզագրում իրականացրած համայնքների կայքը՝ ecomap.smednc.am:

6. Կանանց ձեռներեցությանն աջակցություն

57. Կանանց ձեռներեցությանն աջակցության նպատակով կշարունակվեն իրականացվել կանանց ձեռնարկատիրական կարողությունների բարելավմանն ուղղված տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական բնույթի միջոցառումներ:

58. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման բնագավառում կանանց ձեռնարկատիրական նախաձեռնողականության խրախուսման, տնտեսության

տարբեր ճյուղերում կին գործարարների նվաճումների՝ ըստ արժանավույն գնահատման, հանրահռչակման և սատարման նպատակով 2017 թվականին կկազմակերպվի Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխության կազմակերպում:

7. Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում

59. Հայաստանում ձեռնարկատիրության զարգացման կարևոր խնդիրներից է ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության միջազգայնացումը, որը լրացուցիչ հնարավորություններ կստեղծի տեղական ՓՄՁ-ի սուբյեկտների համար՝ արտաքին շուկաներ մուտք գործելու գործընթացում:

60. 2017 թվականին աշխատանքներ կիրականացվեն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ում աջակցության ծրագրային նոր ուղղություն ձևավորելու համար: Համագործակցելով տեղական և միջազգային կազմակերպությունների հետ՝ կտեղայնացվի տվյալ ուղղությամբ գոյություն ունեցող լավագույն միջազգային փորձը: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ում արդյունավետ գործիքներ կկիրառվեն արտահանող կամ արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտներին համակողմանի տեխնիկական, տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով: Տվյալ բաղադրիչի շրջանակներում հատկապես կարևորվում են արտադրության ստանդարտացումը միջազգային նորմերի համապատասխան, փաթեթավարումը, արտահանման հետ կապված կարգավորումների իրազեկումը, անհատական կամ խմբային ապրանքանշման կիրառումը, կլաստերիզացիան և այլն:

61. ***<u>Աջակցություն Հայաստանում ձեռնարկությունների եվրոպական ցանցի միջոցով</u>*** տվյալ ուղղության շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից կօգտագործվեն Հայաստանում ձեռնարկությունների եվրոպական ցանցի (այսուհետ՝ ՁԵՑ) գործարար համագործակցության կենտրոնի հնարավորությունները, ինչպես նաև կուժեղացվեն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մասնագետների կարողությունները՝ ՓՄՁ-ի սուբյեկտներին՝ համապատասխան հարցերին վերաբերող գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ցուցաբերման ուղղությամբ:

62. ՁԵՑ-ի գործունեության նպատակն է աջակցել ՁԵՑ-ի անդամ երկրներում գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին՝ վերջիններիս նորարարական ներուժը զարգացնելու և Եվրամիության շրջանակներում գործարարության խթանման համար իրականացվող գործընթացներին մասնակից դառնալու նպատակով:

63. Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը 2008 թվականից ի վեր, հանդիսանալով ՁԵՑ-ի հյուրընկալող կառույց, ներկայումս գործում է որպես Հայաստանում ՁԵՑ-ի գործարար համագործակցության կենտրոն:

64. Սկսած 2015 թվականից՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հետ կոնսորցիումով հանդիսանում է ՁԵՑ-ի գործարար համագործակցության կենտրոնը Հայաստանում: Հայաստանում ՁԵՑ-ի գործարար համագործակցության կենտրոնի գործունեությունն ուղղված է հայ գործարարների գործունեության միջազգայնացմանը և եվրոպական շուկա մուտք գործելու հնարավորությունների ընդլայնմանը, նրանց նորարարական կարողությունների զարգացմանը և տեխնոլոգիական կատարելագործմանը:

65. «Ձեռնարկությունների և փոքր ու միջին ձեռնարկությունների մրցունակություն (2014-2020 թ.թ.)» ԿՈՍՄԵ (COSME[1]) ծրագրին Հայաստանի մասնակցությունը սկսած 2016 թվականից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ին հնարավորություն է տալիս համաֆինանսավորում ստանալ Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ)[2] գործունեության շրջանակներում՝ էականորեն բարձրացնելով Հայաստանում վերջինիս գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև դիմել ձեռնարկատիրության ոլորտի զարգացմանն ուղղված այլ ծրագրերի:

66. Հայաստանում ՁԵՑ-ի գործարար համագործակցության կենտրոնի կողմից 2017 թվականին նախատեսվում է միջոցառումների լայն շրջանակ, որոնք կուղղվեն ՁԵՑ-ի գործունեության լուսաբանմանն ու հնարավոր շահառուների շրջանում տեղեկատվության տարածմանը, եվրոպական շուկաներ մուտք գործելու օրենսդրական ընթացակարգերի և

---

[1] "Competitiveness of Enterprises and Small and Medium-sized Enterprises (COSME, 2014 - 2020)" ծրագիրը ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագիր է, որը հասանելի է ԵՄ-ի անդամ երկրներին, անդամակցող երկրներին և Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) մեջ ընդգրկված երկրներին, այդ թվում՝ նաև Հայաստանին:

[2] ՁԵՑ-ն իր գործունեությունը մեկնարկել է 2008 թ.-ից և ներառում է ավելի քան 60 անդամ երկրների շուրջ 600 գործընկեր կազմակերպություններ՝ տրամադրելով բազմաթիվ մասնագիտացված գործարար ծառայություններ իր շահառու կազմակերպություններին: ՁԵՑ-ին անդամակցում են առևտրաարդյունաբերական պալատներ, համալսարաններ, գիտական կենտրոններ, ՓՄՁ-ին աջակցող կառույցներ, գործակալություններ /http://een.ec.europa.eu/:

ստանդարտների պարզաբանմանը, Հայաստանի ՓՄՁ սուբյեկտների համար ՁԵՑ-ի անդամ-երկրների շրջանում գործընկերների որոնմանը և գործարար կապերի հաստատմանը, գործարար տեղեկատվության և տեխնոլոգիաների փոխանցմանը, նորարարությունների խթանմանը և այլն: Բացի դրանից, ՓՄՁ սուբյեկտների և այլ շահագրգիռ կազմակերպությունների շրջանում ամսական կտրվածքով կտարածվի Հայաստանում ՁԵՑ-ի գործարար համագործակցության կենտրոնի էլեկտրոնային տեղեկաթերթը, ինչպես նաև եռամսյակային կտրվածքով կտարածվի միջազգային գործարար միջոցառումների տեղեկաթերթը, որտեղ գործարարները կարող են ստանալ գործարար տեղեկատվություն, մասնավորապես, տեղեկանալ Հայաստանում գործընկերների որոնման առաջարկներին, ինչպես նաև՝ ՁԵՑ-ի անդամ-երկրներում կազմակերպվող ցուցահանդեսների և այլ միջոցառումների մասին: Նշված գործարար տեղեկատվությունը կտեղադրվի նաև Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ինտերնետային էջում, ՁԵՑ Հայաստանի կայքում (www.eenarmenia.am), ինչպես նաև սոցիալական ցանցերում ու ամսական էլեկտրոնային տեղեկաթերթերում:

67. 2017 թվականին Հայաստանում ՁԵՑ-ի գործունեության ընդլայնման նպատակով կշարունակվեն աշխատանքներ իրականացվել տեղական, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ՝ համագործակցության հաստատման նպատակով:

68. Այս համատեքստում, նպատակ ունենալով խթանել ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության միջազգայնացումը՝ ՁԵՑ-ի գործընկեր տեղական, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ համագործակցության շրջանակներում կապահովվի ՓՄՁ-ի սուբյեկտների մասնակցությունը միջազգային ցուցահանդեսներին, տոնավաճառներին և գործարար համագործակցության հաստատման այլ միջոցառումներին:

69. Ընդհանուր առմամբ՝ 2017 թվականին Հայաստանում ՁԵՑ-ի գործարար համագործակցության կենտրոնի գործունեության ապահովման շրջանակներում ՁԵՑ-ի գործարար համագործակցության հիմնապաշարը կհամալրվի ևս 30-40 գործարար նկարագրերով՝ ապահովելով միջազգային համագործակցության ներուժ ունեցող հայ

գործարարների կողմից ներկայացված առնվազն 70 գործարար նկարագրերի մշտական առկայությունը:

70. Միջազգայնացման և նորարարական ներուժ ունեցող ընտրված շուրջ 120-150 հայ գործարարների համապարփակ աջակցություն կցուցաբերվի նրանց միջազգայնացման կարողությունների զարգացման ուղղությամբ: ՓՄՁ-ի սուբյեկտները կստանան անհատական խորհրդատվություն և կմասնակցեն տեղեկատվական բնույթի ընդհանուր և մասնագիտացված դասընթացների, ցուցահանդեսների, կմշակվեն ներդրումային ծրագրեր և այլն: Անհատական աշխատանք կիրականացվի առավել իրատեսական ծրագրեր ունեցող ՓՄՁ-ների հետ՝ նրանց միջազգայնացման պլանների իրագործման ուղղությամբ:

8. Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում

71. Ծրագրով նախատեսված ծրագրային միջոցառումների (ուղղությունների) իրականացման արդյունավետության բարձրացման ու ընդլայնման և այդ համատեքստում լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով, ինչպես ընթացքի մեջ գտնվող ծրագրերի շրջանակներում, այնպես էլ նոր ծրագրերի մշակման ու իրականացման, նաև միջազգային լավագույն փորձի փոխանցման նպատակով, աշխատանքներ կիրականացվեն Հայաստանում ՓՄՁ-ի զարգացմանն ուղղված համապատասխան ծրագրեր իրականացնող միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ համագործակցության ընդլայնման, ինչպես նաև նոր ծրագրային առաջարկների մշակման ու իրականացման ուղղությամբ:

72. Մասնավորապես, 2017 թվականին կշարունակվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի համագործակցությունը Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության հետ՝ «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջմղում» ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության հետ՝ «Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար» ծրագրի, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության

հետ՝ «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի, ինչպես նաև այլ միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ:

73. 2017 թվականին նախատեսվում է ԵՄ կողմից ֆինասավորվող «Ռեգիոնալ ՓՄՁ-ների մրցունակության խթանումը, որպես տեղական տնտեսական զարգացման նախապայման» 24 ամիս տևողությամբ ծրագրի մեկնարկը: Ծրագիրը կընդգրկի ՀՀ երեք մարզեր (Լոռի, Արմավիր, Սյունիք) և ուղղված կլինի ՓՄՁ-ների մրցունակության աճին և կայուն աշխատատեղերի ստեղծմանը: Ծրագրի բաղադրիչներն են՝ «Ձեռնարկատիրության խթանում», «Զբաղվածության խթանում», «Ենթակառուցվածքների զարգացում»:

74. 2017 թվականին նախատեսվում է ԵՄ կողմից ֆինասավորվող «ԷՐԱՍՄՈՒՍ երիտասարդ ձեռներեցների համար» ծրագրի մեկնարկը: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ծրագրին կմասնակցի որպես գործընկեր կազմակերպություն: ԷՐԱՍՄՈՒՍ ծրագրի նպատակն է նպաստել երիտասարդ ձեռներեցների ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանը, մրցունակության բարձրացմանը՝ արտերկրյա համանման ոլորտում գործող փորձառու կազմակերպությունների հետ փորձի փոխանակման և գործնական կապերի հաստատման միջոցով:

75. Ռուսաստանի ՓՄՁ զարգացման դաշնային կորպորացիայի հետ համագործակցության շրջանակներում 2017 թվականին աշխատանքներ կիրականացվեն Հայաստանում բիզնես նավիգատորի ներդրման նպատակահարմարության ուղղությամբ: Բիզնես նավիգատորը առցանց տեղեկատվական/խորհրդատվական գործիք է, որը համակողմանի աջակցում է ներդրողին ճիշտ որոշում կայացնելու ապագա գործունեության տեսակի, վայրի, ներդրումների ծավալի, առկա պահանջարկի և մրցակիցների մասին և հնարավորություն է ընձեռում ավտոմատ կերպով ձևավորել բիզնես պլան:

76. Ընդհանուր առմամբ, 2017 թվականի ընթացքում ֆինանսական ու ներդրումային աջակցության, տեղական տնտեսական զարգացման և ոլորտային աջակցության, տեղական արտադրանքի արտահանմանն աջակցության և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովման, կանանց ձեռներեցությանն աջակցության, «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության», ինչպես նաև գործարար ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական ուղղություններով աջակցություն կցուցաբերվի Երևանում և Հայաստանի Հանրապետության մարզերում

գործող շուրջ 4200 սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտների՝ ապահովելով 8000-9000 անգամ աջակցություն, մասնավորապես՝

1) գործարար ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական աջակցության շրջանակներում աջակցություն կցուցաբերվի շուրջ 4000 սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտների՝ 8000-8500 անգամ.

2) ֆինանսական և ներդրումային աջակցության շրջանակներում աջակցություն կցուցաբերվի 15-20 սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտների.

3) այլ աջակցության շրջանակներում 120-150 սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտների:

ԳԼՈՒԽ 6. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

77. Համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջների՝ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության տարեկան ծրագրերի ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ առանձին տողով: Այն կարող է իրականացվել (համալրվել) նաև օրենքով չարգելված այլ ֆինանսական միջոցների հաշվին:

78. Ծրագրի իրականացման համար նախատեսվում է Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեից հատկացնել 152,600.0 հազ ՀՀ դրամ, որի հաշվին կապահովվի ծրագիրն իրականացնող անձնակազմի և փորձագետների (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աշխատողների) վարձատրությունը՝ լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավմամբ:

79. Ծրագրով նախատեսված ծրագրային միջոցառումների (ուղղությունների) ֆինանսական ապահովումը կիրականացվի հետևյալ ֆինանսական միջոցների հաշվին՝

1) «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում» ծրագրային միջոցառումը (ուղղությունը) նախատեսվում է իրականացնել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի եկամուտների հաշվին.
2) սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցության (վարկային երաշխավորությունների) տրամադրումը և վարկերի դիմաց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունների տրամադրումը և գործարար նախաձեռնությունների

աջակցությունը կիրականացվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միավորված դրամագլխի միջոցների (1,833,022.1 հազ. դրամ) հաշվին:

3) ՓՄՁ-ի սուբյեկտների ուղղակի վարկավորումը կիրականացվի «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ներգրավված վարկային, ինչպես նաև միջազգային ֆինանսական կառույցներից և դոնոր կազմակերպություններից ներգրավվող փոխառու միջոցների հաշվին:
4) հաշվապահական կենտրոնի գործունեությունը կապահովվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի եկամուտների հաշվին, ինչպես նաև նախատեսվում է շարունակել Երևան քաղաքի Կոմիտասի 49/3 հասցեում տեղակայված տարածքի օգտագործումը.
5) մյուս ծրագրային միջոցառումները (ուղղությունները) նախատեսվում է իրականացնել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի եկամուտների, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ համագործակցության շրջանակներում ներգրավված միջոցների, ինչպես նաև «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերության գործունեության արդյունքում ստացված եկամուտներից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ին տրամադրված շահաբաժնի հաշվին.
6) նշված ծրագրային միջոցառումների (ուղղությունների) իրականացման նպատակով կարող են լրացուցիչ ներգրավվել նաև միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցները, այդ թվում՝ համաֆինանսավորման սկզբունքով:

Հավելված N 2
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի 2017 թվականի
փետրվարի 22-ի N 148-Ա հրամանի

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

«ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ԶԱԿ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ» 2017 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառումը	Ակնկալվող արդյունքը	Կատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6
1.	ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում	2017 թվականին կիրականացվեն աշխատանքներ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի աշխատողների մասնագիտական հմտությունների զարգացման և որակավորման բարձրացման, ինչպես նաև աջակցության ծրագրերում գործընկեր կազմակերպությունների ներգրավման համար:	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	2017 թ. ընթացքում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ

1	2	3	4	5	6
2.	ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում)	2017 թվականին Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում գործարար ուսուցողական դասընթացներին կմասնակցեն առնվազն 350 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներ:	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	2017 թ. ընթացքում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3.	ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	2017 թվականին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության շրջանակներում աջակցություն կցուցաբերվի 3500-4000 ՓՄՁ-ի սուբյեկտի՝ ապահովելով առնվազն 8000 անգամ աջակցություն:	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	2017 թ. ընթացքում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4.	ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն	2017 թվականին գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին և սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցության (վարկային երաշխավորությունների տրամադրման) և գործարար նախաձեռնություններին աջակցության շրջանակներում ֆինանսական աջակցություն կցուցաբերվի 15-20 գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտի:	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ) «ՓՄՁ ներդրումեր» ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ (համաձայնությամբ)	2017 թ. ընթացքում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ

1	2	3	4	5	6
5.	Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային աջակցություն	2017 թվականին, 2013-2016 թթ. ընթացքում կատարած մրցակցային առավելությունների մասնակցային գնահատման (PACA) արդյունքում բացահայտված տնտեսական նախաձեռնություն-ներից կիրականացվեն՝ 1) 10-15 ենթակառուցվածքային ծրագրեր. 2) կմշակվի – 1 օրինակելի գործարար մոդել և 1 գործարար ուղեցույց. 3) գերակա ոլորտներում գործող 10-15 սկսնակ գործարարների կտրամադրվեն դրամաշնորհներ. 4) տեխնոլոգիական դասընթացներ/խորհր-դատվություն կկազմակերպվի շուրջ 40 սկսնակ գործարարների համար (ներառված է ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն բաժնի ցուցանիշների մեջ). 5) կթարմացվի տնտեսական քարտեզագրում իրականացրած համայնքների կայքը (ecomap.smednc.am):	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	2017 թ. ընթացքում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ
6.	Կանանց ձեռներեցությանն աջակցություն	2017 թվականին կին գործարարների համար կկազմակերպվեն տեղեկատվական, խորհրդա-տվական և ուսուցողական բնույթի միջոցառում-ներ կանանց ձեռներեցության զարգացման ծրագրեր իրականացնող տեղական և միջազգային կազմակերպությունների (ծրագրերի) հետ համագործակցության շրջանակներում, ինչպես նաև «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխություն:	ՀՀ տնտեսական զարգացման ևներդրումների նախարարություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	2017 թ. ընթացքում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ

1	2	3	4	5	6
7.	Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում	2017 թվականին Հայաստանում ՁԵՑ-ի գործարար համագործակցության կենտրոնի գործունեության ապահովման շրջանակներում ՁԵՑ-ի գործարար համագործակցության հիմնապաշարը կհամալրվի միջազգային համագործակցության ներուժ ունեցող հայ գործարարների կողմից ներկայացվող 30-40 նոր գործարար համագործակցության վերաբերյալ առաջարկներով, ինչպես նաև գործունեության միջազգայնացման նպատակով աջակցություն կցուցաբերվի առնվազն 120-150 հայ գործարարների:	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	2017 թ. ընթացքում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ
8.	Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում	2017 թվականին ծրագրային միջոցառումների (ուղղությունների) իրականացման արդյունավետության բարձրացման ու ընդլայնման և այդ համատեքստում լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով՝ ինչպես ընթացքի մեջ գտնվող ծրագրերի շրջանակներում, այնպես էլ նոր ծրագրերի մշակման ու իրականացման, նաև միջազգային լավագույն փորձի փոխանցման նպատակով աշխատանքներ կիրականացվեն Հայաստանում ՓՄՁ-ի զարգացմանն ուղղված համապատասխան ծրագրեր իրականացնող միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ համագործակցության ընդլայնման, ինչպես նաև նոր ծրագրային առաջարկների մշակման և իրականացման ուղղությամբ:	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն ՀՀ շահագրգիռ կառույցներ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	2017 թ. ընթացքում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ